ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էին ԱՄՆ-ից Հայրենիք ժամանած ուխտավորները, որոնք վերջում հաղորդվեցին։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 27-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանի ընկերակցությամբ, մեկնեց Թբիլիսի՝ հին տոմարով Ս. Աստվածածնի տոնին պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

Օգոստոսի 28-ին, կիրակի, սրբազանը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Թբիլիսիի հայոց առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցում, քարոզում է օրվա տոնի մեծ նշանակության մասին և հավարտ սուրբ պատարագի կատարում է «Կարգ խաղող օրհնելոյ»։

Օգոստոսի 29-ին սրբազանը վերադարձավ Մայր Աթոռ։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն գիւտի գօտւոյ Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հարությունվարդապետ Մատենճյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱնայէ»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանը թեմական գործերով և իր պաշտոնատեղին վերադարձավ ամսի 10-ին, շաբաթ օր։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Խաչվերաց։ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Սահակյանը։

Սուրբ պատարագին ներկա էին արտասահմանից Հայրենիք ժամանած ուխտավորներ, ինչպես նաև բազմաթիվ հավատացյալներ։ Երեկոյան, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, Մայր Տաճարի բակում կատարվեց Խաչվերացի հանդիսավոր թափոր-անդաստան։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Հովհաննիսյանի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՕԳՈՍՏՈՍ ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ընթացքում Մայր Աթոռ այցելեցին բազմաթիվ ուխտավորներ, տուրիստներ, էքսկուրսանտներ, որոնք եղան Մայր Տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում և մեկնեցին լավագույն տպավորություններով։